

Ցանկ Առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների

1. Տուբերկուլյոզ,
2. Հետինֆարկտային վիճակներ, եթե հիվանդն առնվազն մեկ ամիս բուժվել է ստացիոնարում,
3. Ստամոքսի, տասներկուամատնյա աղիքի հետվիրահատական վիճակներ:

Կարգ Ապահովագրական նպաստի հաշվարկման, նշանակման եւ վճարման

I. Վարձու աշխատողներին տրվող ապահովագրական նպաստների հաշվարկման, նշանակման եւ վճարման կարգը

1. Վարձու աշխատողին տրվող ժամանակավոր անաշխատունակության նպաստը (այսուհետ՝ ապահովագրական նպաստ) հաշվարկում, նշանակում եւ վճարում է գործատուն՝ հիմք ընդունելով բժշկական հաստատության կողմից տրված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը (այսուհետ՝ անաշխատունակության թերթիկ):
2. "Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված կարգով ապահովագրական նպաստի իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող վարձու աշխատողի ապահովագրական նպաստը հաշվարկում, նշանակում եւ վճարում է գործատուն՝ ընդհանուր հիմունքներով:
3. Վարձու աշխատողին տրվող ապահովագրական նպաստ վճարվում է անաշխատունակության թերթիկով վավերացված բոլոր օրերի համար, բայց ոչ ավելի, քան օրենքով սահմանված տեւողությամբ՝ մինչեւ նրա՝ օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատվելը:
4. Վարձու աշխատողին տրվող հղիության եւ ծննդաբերության նպաստը հաշվարկվում, նշանակվում եւ վճարվում է այն ժամանակահատվածի համար, երբ քաղաքացին գործատուի անհատական իրավական ակտի հիման վրա գտնվել է հղիության եւ ծննդաբերության արձակուրդի մեջ՝ բացառությամբ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դեպքերի:
Եթե վարձու աշխատողից անկախ պատճառներով հղիության եւ ծննդաբերության արձակուրդը չի ձեւակերպվել, ապա նպաստը նշանակվում եւ վճարվում է՝ սկսած այն ժամկետից, երբ վարձու աշխատողը չի ներկայացրել աշխատանքի, բայց ունեցել է հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք:
5. Ապահովագրական նպաստը հաշվարկվում եւ նշանակվում է սույն կարգով սահմանված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ մինչեւ առաջիկա աշխատավարձը վճարելու օրը:
6. Վարձու աշխատողն ապահովագրական նպաստի հաշվարկման եւ նշանակման համար գործատուին է ներկայացնում բժշկական հաստատության կողմից տրված անաշխատունակության թերթիկը (սույն կարգով սահմանված դեպքերում՝ անաշխատունակության թերթիկի լուսապատճենը):
7. Համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի հիմնական աշխատավայրի գործատուն անաշխատունակության թերթիկի հիման վրա նշանակում է ապահովագրական նպաստը, ինչպես նաեւ կնքում է աշխատողի ներկայացրած (գործատուի կողմից դեռեւս չլրացված) անաշխատունակության թերթիկի լուսապատճենը (լուսապատճենները), ինչը հիմք է հանդիսանում մյուս գործատուի (գործատուների կամ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական

հիմնադրամի տարածքային կենտրոնի կողմից (այսուհետ՝ տարածքային կենտրոն) ապահովագրական նպաստի նշանակման համար:

8. Անաշխատունակության թերթիկին (սույն կարգով սահմանված դեպքերում՝ անաշխատունակության թերթիկի լուսապատճենին) կից ներկայացվում են նաեւ՝

ա) ընտանիքի հիվանդ անդամի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը, իսկ մինչեւ 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելիս՝ նաեւ առողջարանային ուղեգրի լուսապատճենը՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի դեպքում,

բ) առողջարանային ուղեգրի լուսապատճենը՝ առողջարանային բուժման նպաստի դեպքում,

գ) ապահովագրական (աշխատանքային) ստաժը հաստատող փաստաթղթեր կամ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

9. Ապահովագրական (աշխատանքային) ստաժը հաստատող փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել՝

ա) 18 տարին չլրացած հաշմանդամ երեխայի ծննդյան վկայականի լուսապատճենը եւ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից տրված հաշմանդամության մասին տեղեկանքի լուսապատճենը, եթե ապահովագրական նպաստի իրավունք ունեցող անձն իր խնամքի տակ ունի 18 տարին չլրացած հաշմանդամ երեխա, կամ՝

բ) երեխաների ծննդյան վկայականների լուսապատճենները, եթե ապահովագրական նպաստի իրավունք ունեցող անձն իր խնամքի տակ ունի 3 եւ ավելի երեխա, կամ՝

գ) խնամակալության եւ հոգաբարձության մարմինների տված տեղեկանքը, եթե ապահովագրական նպաստի իրավունք ունեցող անձն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձ է, կամ՝

դ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության համար մարտական գործողությունների մասնակցության փաստը հավաստող փաստաթղթի լուսապատճենը, կամ՝

ե) Չեռնոբիլի ԱԵԿ-ի վթարը վերացնելու պատճառով հաշմանդամ ճանաչվելու մասին փաստաթղթի լուսապատճենը:

10. Գործատուն լրացնում է անաշխատունակության թերթիկի համապատասխան տողերը եւ ներկայացված փաստաթղթերի հիման վրա հաշվարկում ու նշանակում ապահովագրական նպաստը:

11. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողներին տրվող ապահովագրական նպաստը հաշվարկվում, նշանակվում եւ վճարվում է ընդհանուր հիմունքներով՝ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պայմանների առկայությամբ:

12. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների կատարումից՝ օրենքով սահմանված կարգով ազատված գործատուների կողմից վարձու աշխատողներին տրվող ապահովագրական նպաստները հաշվարկվում, նշանակվում եւ վճարվում են ընդհանուր հիմունքներով՝ գործատուի միջոցների հաշվին:

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների կատարումից՝ օրենքով սահմանված կարգով ազատված գործատուների՝ իրենց վարձու աշխատողների ապահովագրական նպաստները վճարելու ուղղությամբ կատարած ծախսերը չեն փոխհատուցվում:

II. Անհատ ձեռնարկատերերին եւ նոտարներին տրվող ապահովագրական նպաստների հաշվարկման, նշանակման եւ վճարման կարգը

13. Անհատ ձեռնարկատերերին եւ նոտարներին (այսուհետ՝ ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձինք) տրվող ապահովագրական նպաստները հաշվարկում, նշանակում եւ վճարում է տարածքային կենտրոնը՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվելուց հետո մեկամսյա ժամկետում:

14. Ապահովագրական նպաստ ստանալու համար ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձն իր՝ որպես ապահովադիր պետական գրանցման վայրի տարածքային կենտրոն է ներկայացնում սահմանված ձեւի դիմում՝ կցելով՝

ա) բժշկական հաստատության կողմից տրված անաշխատունակության թերթիկը (սույն կարգով սահմանված դեպքերում՝ անաշխատունակության թերթիկի լուսապատճենը),

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կողմից տրված տեղեկանքը ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա համար օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի մասին,

գ) ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի դեպքում՝ հիվանդ երեխայի անձը հաստատող փաստաթղթի լուսապատճենը, իսկ մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամ երեխայի առողջարանային բուժման դեպքում՝ նաեւ առողջարանային ուղեգրի լուսապատճենը,

դ) ապահովագրական (աշխատանքային) ստաժը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթեր):

15. Եթե ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձն ունի մինչև 8 տարվա ապահովագրական (աշխատանքային) ստաժ, ապա ապահովագրական (աշխատանքային) ստաժը հաստատող փաստաթղթերի փոխարեն կարող է ներկայացնել սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերից որեւէ մեկը:

16. Տարածքային կենտրոնը, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը, հաշվարկում, նշանակում եւ վճարում է ապահովագրական նպաստը:

III. Քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված դատապարտյալի ապահովագրական նպաստների հաշվարկման եւ վճարման կարգը

17. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկում (այսուհետ՝ հիմնարկ) գտնվող ազատազրկված դատապարտյալի համար (այսուհետ՝ դատապարտյալ) հաշվարկվում եւ նրան վճարվում են միայն հիվանդության, հղիության եւ ծննդաբերության նպաստներ (այսուհետ՝ նպաստ)՝ ընդհանուր հիմունքներով:

18. Դատապարտյալին նպաստը նշանակում եւ վճարում է հիմնարկը:

19. Դատապարտյալին անաշխատունակության թերթիկ տրամադրում է հիմնարկի կամ հիմնարկի գտնվելու վայրի վարչական տարածքն սպասարկող առողջապահական կազմակերպությունը:

20. Հիմնարկի ղեկավարը գործատուներից, կազմակերպություններից եւ ֆիզիկական անձանցից պահանջում է աշխատանքային (ապահովագրական) ստաժի, դրանում հաշվարկվող գործունեության առանձին տեսակների մասին տեղեկատվություն կամ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթեր, որոնք պահվում են դատապարտյալի անձնական գործում:

21. Տեւական հիվանդություն ունեցող դատապարտյալը բժշկասոցիալական փորձաքննության է ուղարկվում անաշխատունակությունն սկսվելու օրվանից 3 ամսվանից ոչ ուշ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 7-ի "Ազատազրկման վայրում գտնվող ազատազրկվածին կենսաթոշակ նշանակելու, վճարելու եւ նրան հաշմանդամ ճանաչելու կարգը հաստատելու մասին" N 1457-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Հավելված N 3
ՀՀ կառավարության
2006 թվականի մարտի 30-ի
N 571-Ն որոշման

Կարգ

Ապահովագրական նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի (եկամտի) հաշվարկման

1. Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացուցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հունիսի 8-ի N 352 որոշման 5-րդ կետով հաստատված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների եւ դրանց հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների) ցանկի 1-ին կետով նախատեսված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից եւ դրանց հավասարեցված եկամուտներից (այսուհետ՝ վաստակ), որոնցից օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ:

2. Եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացուցային ամիսներին լրիվ է աշխատել, ապա միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է՝ նշված 3 ամսվա վաստակը (բացառությամբ պարզեւատրումների եւ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարների) բաժանելով 3-ի:

3. Եթե ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող՝ տվյալ գործատուի մոտ աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացուցային ամսվանից կամ, եթե ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 ամիսների ընթացքում աշխատողը լրիվ չի աշխատել (3 ամիսների օրացուցային ոչ բոլոր օրերի համար է հաշվարկվել աշխատավարձ), ապա միջին ամսական աշխատավարձը որոշելու համար այդ 3 ամիսների աշխատած օրերի համար հաշվարկված վաստակի ընդհանուր գումարը (բացառությամբ պարգևատրումների և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարների) բաժանվում է աշխատավարձ ստացած և հաշվառումից չհանվող ժամանակաշրջանների օրացուցային օրերի թվի վրա, և ստացված միջին օրական վաստակը բազմապատկվում է միջին ամսական օրացուցային օրերի թվով՝ 30.4-ով: Հաշվառումից չհանվող ժամանակաշրջանն այն ժամանակաշրջանն է, երբ քաղաքացու համար չի հաշվարկվել աշխատավարձ և այն հետեւանք չէ օրենքով սահմանված ամենամյա (այդ թվում՝ լրացուցիչ և երկարացված) կամ նպատակային արձակուրդի կամ ժամանակավոր անաշխատունակության:

4. Ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացուցային ամիսներին վարձու աշխատողի համար հաշվարկված պարգևատրումները և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները գումարի մեկ տասներկուերորդի չափով ավելացվում են սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձին՝ բացառությամբ հաջորդ պարբերությունում նշված դեպքի: Եթե ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 ամիսների ընթացքում աշխատողն ընդհանրապես չի աշխատել (3 ամիսների օրացուցային օրերի համար չի հաշվարկվել աշխատավարձ), բայց ունեցել է սույն կարգի 1-ին կետով սահմանված այլ եկամուտ, ապա միջին ամսական աշխատավարձը որոշվում է՝ այդ ժամանակահատվածում փաստացի վճարված վաստակը 3-ի բաժանելու միջոցով:

Եթե ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը սույն կարգի 1-ին կետով սահմանված որեւէ եկամուտ չի ունեցել, ապա, որպես միջին ամսական աշխատավարձ (եկամուտ), հիմք է ընդունվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 13-ապատիկը:

5. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա համար տարեկան եկամուտների մասին հայտարարագրով ներկայացված՝ տվյալ անձի համար օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտից:

6. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկելու համար ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդող տարվա համար տարեկան եկամուտների մասին հայտարարագրով ներկայացված՝ տվյալ անձի համար օրենքով սահմանված կարգով սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամուտը բաժանվում է 12-ի:

Եթե ապահովագրական դեպքին նախորդող տարում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձը սույն կետի առաջին պարբերությամբ սահմանված եկամուտ չի ունեցել, ապա, որպես միջին ամսական աշխատավարձ (եկամուտ), հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 13-ապատիկը:

7. Եթե սույն կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի չափը պակաս է նվազագույն աշխատավարձի 13-ապատիկից, ապա ապահովագրական նպաստի չափը հաշվարկվում է նվազագույն աշխատավարձի 13-ապատիկից: